

Առողջապահության նախարարություն

# Սոցիալ-ժողովրդագրական տվյալների հավաքագրման, օգտագործման և բացահայտման համաձայնություն

Առողջապահության նախարարությունը հավաքագրում է սոցիալ-ժողովրդագրական տվյալներ COVID-19 պատվաստում ստացող անձանցից: Մա ներառում է տվյալներ իրենց ռասայի, էթնիկական պատկանելիության, եկամտի, ընտանիքի չափսի և լեզվի մասին:

Եթե որոշեք Նախարարությունը տրամադրել այս տեղեկատվությունն, ապա Նախարարությունն այն կօգտագործի և կբացահայտի Օնտարիոյում պատվաստումների տարածումը և խթանումը պլանավորելու նպատակով, ինչպես նաև օրենքով լիազորված և պահանջվող այլ նպատակներով:

Նախարարությունը կօգտագործի այս տվյալները, որպեսզի ստեղծի հանրությանը հասանելի զեկույցներ: Այս զեկույցները չեն պարունակի որևէ նույնականացնող տեղեկություններ ձեր մասին: Նախարարությունը կերաշխավորի այս տվյալների պատասխանատու օգտագործումը՝ հարգելով մարդկանց գաղտնիությունը:

Ձեր տրամադրած բոլոր տվյալները պահվելու են COVax համակարգում և հասանելի կլինեն առողջապահական խնամքի մատակարարներին պատվաստման կլինիկաներում: COVax-ն առողջապահական արձանագրությունների համակարգ է, որը վերահսկվում է Նախարարության կողմից:

**Այս տվյալների տրամադրումը կամավոր է:**

Կարող եք չտրամադրել այս տվյալները, եթե չեք ցանկանում անել դա: Ձեզ չեն մերժի COVID-19 պատվաստումը կամ որևէ այլ ծառայություններ, եթե դուք դրան համաձայն չեք: Կարող եք պատասխանել բոլոր, որոշ հարցերին կամ չպատասխանել ոչ մի հարցի:

Եթե տրամադրեք ձեր տվյալները, սակայն հետագայում մտափոխվեք դրա օգտագործման վերաբերյալ, կարող եք դիմել Նախարարություն և խնդրել, որպեսզի ձեր սոցիալ-ժողովրդագրական տվյալները չօգտագործվեն կամ չբացահայտվեն:

Կարող եք անել դա՝ էլ. նամակ ուղարկելով Նախարարություն՝ [ConsentWD@ontario.ca](mailto:ConsentWD@ontario.ca):

Համաձայն եք Նախարարությանը տրամադրել ձեր տվյալները:

**Ես համաձայն եմ տրամադրել իմ սոցիալ-ժողովրդագրական տվյալները վերոնշյալ նպատակներով:**

**Ո՞րն է ձեր էթնիկական կամ մշակութային ծագում(ներ)ը:**  
 Օրինակ՝ կանադացի, չինացի, արևելյան հնդիկ, անգլիացի, իտալացի, ֆիլիպինցի, շոտլանդացի, իռլանդացի, պորտուգալիացի, գերմանացի, լեհ, հոլանդացի, ֆրանսիացի, ջամայկացի, պակիստանցի, իրանցի, շրի լանկացի, կորեացի, ուկրաինացի, լիբանանցի, գայանացի, սոմալացի, կոլումբիացի, հրեա և այլն:

**Ո՞րն է լավագույնս նկարագրում ձեզ: Ընտրեք բոլոր կիրառելի տարբերակները:**

Ռասայի կարգեր	Նկարագիր/օրինակներ
<input type="checkbox"/> Սև	Ծագամբ աֆրիկացի, աֆրո-կարիբյան, աֆրիկացի-կանադացի
<input type="checkbox"/> Արևելյան ասիացի	Ծագամբ չինացի, կորեացի, ճապոնացի, թայվանցի
<input type="checkbox"/> Հարավարևելյան ասիացի	Ծագամբ ֆիլիպինցի, վիետնամացի, քամբոջիացի, թայ, ինդոնեզացի կամ այլ հարավարևելյան ասիական ծագում
<input type="checkbox"/> Լատինո	Ծագամբ լատինական ամերիկացի, հիսպանիկ
<input type="checkbox"/> Միջին արևելյան	Արաբ, պարսիկ, արևմտյան ասիական ծագում, օրինակ՝ աֆղանստանցի, եգիպտացի, իրանցի, լիբանանցի, թուրք, քուրդ և այլն
<input type="checkbox"/> Հարավային ասիացի	Ծագամբ հարավային ասիացի, օրինակ՝ արևելյան հնդիկ, պակիստանցի, բանգլադեշցի, շրի լանկացի, ինդո-կարիբյան և այլն
<input type="checkbox"/> Սպիտակ	Ծագամբ եվրոպացի
<input type="checkbox"/> Այլ ռասայի կարգ	Խնդրում ենք նշել՝

<b>Ինչքա՞ն է եղել ձեր ընտանիքի ընդհանուր եկամուտն անցյալ տարի նախքան եկամտահարկը:</b> Ընտրեք մեկը:	<input type="checkbox"/> \$0-\$29,999	<input type="checkbox"/> \$100,000 - \$149,999
	<input type="checkbox"/> \$30,000 - \$49,999	<input type="checkbox"/> \$150,000 կամ ավել
	<input type="checkbox"/> \$50,000 - \$69,999	<input type="checkbox"/> Չգիտեմ
	<input type="checkbox"/> \$70,000 - \$99,999	<input type="checkbox"/> Չեմ ցանկանում պատասխանել

<b>Ձեզ հաշված՝ քանի՞ հոգի է ապրում ձեր տանը կանոնավոր հիմքով:</b>	<input type="checkbox"/> 1 <input type="checkbox"/> 2 <input type="checkbox"/> 3 <input type="checkbox"/> 4 <input type="checkbox"/> 5 <input type="checkbox"/> 6
	Այլ՝
	<input type="checkbox"/> Չգիտեմ
	<input type="checkbox"/> Չեմ ցանկանում պատասխանել

**Ո՞ր լեզուն էք առաջինը սովորել մանուկ ժամանակ և որը դեռ հասկանում եք:** Խնդրում ենք նշել՝

<b>Կանադայի պաշտոնական լեզուներից՝ անգլերենից կամ ֆրանսերենից, ո՞ր մեկն է ավելի հարմար ձեզ:</b>	<input type="checkbox"/> Ֆրանսերեն	<input type="checkbox"/> Չգիտեմ
	<input type="checkbox"/> Անգլերեն	<input type="checkbox"/> Ոչ մեկը
	<input type="checkbox"/> Անգլերեն և ֆրանսերեն	<input type="checkbox"/> Չեմ ցանկանում պատասխանել